УДК 618.17-008.1

Կանանց սեքսուալ դրսևորումները դեպրեսիվ տրամադրության ժամանակ

Ն.Ռ. Ներսիսյան

Մ.Հերացու անվ. ԵՊԲՀ սեքսոլոգիայի ամբիոն
0025, Երևան, Կորյունի փ., 2

Բանալի բառեր. դեպրեսիվ տրամադրություն, սուբյեկտիվ սեռական գրգռում, սեռական ցանկություն, գենիտալ ռեակցիա

Ժամանակակից սեռագիտության տեսանկյունից կանանց սեքսուալ խանգարումների էթիոպաթոգենեզում համընդհանուր նշանակության է արժանացել եռաբաղադրիչ հասկացական մոդելը [2, 7]: Մասնավորապես սեռական խանգարումների կլինիկական վերլուծությունը կատարվում է՝ ելնելով սեռական առողջության կենսաբանական, հոգեբանական՝ աֆեկտիվ և կոգնիտիվ, ինչպես նաև սոցիալական հիմքերից [27]: Մյուս կողմից, հոգեֆիզիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ կանանց կոպուլյատիվ ցիկլի գենիտոսեգմենտար բաղադրիչի և հոգեկան բաղադրիչի միջև համահարաբերակցական կապերը միանշանակ չեն և տարբերվում են մի սուբյեկտից մյուսը, ինչպես նաև միևնույն սուբյեկտի ներսում [1, 15]: Փորձարարական պայմաններում սեռապես առողջ կանանց մոտ գենիտալ արձագանքման ռեակցիա հնարավոր է հարուցել անգամ սեռապես ոչ նպաստավոր գրգիռներից, որոնք առաջացնում են բացասական աֆեկտ [19]: Այս նույն գրգիռները չեն բերում սուբյեկտիվ գրգռման զգացողության՝ մարմնական արձագանքի միաժամանակյա առկայության պարագայում, ինչը խոսում է այն մասին, որ առավել ամուր կապ գոյություն ունի սեռական գրգիռների և գենիտալ բաղադրիչի, քան այդ նույն գրգիռների և սուբյեկտիվ գրգռման զգացողության միջև: Հոգեֆիզիոլոգիական հետազոտությունները փաստում են նաև, որ սեռական գրգիռները կրում են մեկից ավելի իմաստներ և կարող են հարուցել մեկից ավելի հույզեր՝ սեռական գրգռման հույզի հետ մեկտեղ, ընդ որում, սեռական գրգռման հույզը կարող է հանդես գալ թե դրական, թե բացասական հույզերի հետ միաժամանակ:

Բացասական աֆեկտի և գենիտալ գրգռման ռեակցիայի միջև

ամուր կապի գոյությունը թերևս էվոլյուցիոն տեսակետից նպատակահարմար է, այն իմաստով, որ հակառակ սեռի ներկայությամբ օրգանիզմի ֆիզիոլոգիական պատրաստվածությունը վերարտադրողության ամուր հիմք է ստեղծում: Ինչ վերաբերում է սուբյեկտիվ գրգռմանը՝ այստեղ սեռային գրգիռների և սուբյեկտիվ գրգռվածության միջև գործում են շատ հակասական և պարադոքսալ կապեր: Բացասական աֆեկտի և հատկապես դեպրեսիաների ժամանակ, սովորաբար դիտվում է սուբյեկտիվ գրգռման բացակայություն, ինչը կարելի է բացատրել ինչպես էնդոգեն մետաբոլիկ փոփոխություններով, որոնք ուղեկցում են նմանատիպ վիճակները, այնպես էլ անձի կոգնիտիվ-աֆեկտիվ պրոցեսների անձնային առանձնահատկություններով [30]: Սակայն ինչպե՞ս հասկանալ կլինիկական և փորձարարական պայմաններում հանդիպող հակառակ երևույթը՝ երբ բացասական աֆեկտի ժամանակ ի հայտ է գալիս սուբյեկտիվ արտահայտված սեռական գրգռում՝ գենիտալ բաղադրիչի ուղեկցությամբ կամ դրա բացակայությամբ:

Այսպես օրինակ, ընդունված է համարել, որ տագնապը սեռական գրգռվածության վրա ունի բացասական ազդեցություն, մարդը չի կարող սեռական գրգռում ապրել, երբ նա լարված է, տագնապի մեջ է [13]: Այս տրամաբանությունը հիմնված է սեռական օրգանների վրա վեգետատիվ նյարդային համակարգի երկու բաժինների հակադարձ ազդեցության վրա. սիմպաթիկ համակարգի ակտիվացումն ունի անոթասեղմիչ ազդեցություն, ինչը չեզոքացնում է սեռական գրգռման ռեակցիան, քանի որ վերջինիս հիմքում ընկած է անոթների լայնացման պարասիմպաթիկ մեխանիզմը: Սակայն այսօր պարզ է դարձել, որ մեր նմանատիպ պատկերացումները շատ պարզունակ և մեխանիկական են ու չեն արտացոլում իրականությունը [5]: Այսօր ապացուցված է, որ միանշանակ չէ կապը տագնապի, սեռական գրգռման գենիտալ բաղադրիչի և սուբյեկտիվ գրգռման զգացողության միջև [6, 9, 14, 17, 26]:

Նմանատիպ պատկեր է դիտվում նաև դեպրեսիվ տրամադրության և սեռական գրգռման զուգորդման դեպքում: Ընդունված է համարել, որ դեպրեսիվ տրամադրությունը կանանց սեքսուալ դրսևորումների վրա թողնում է արգելակող ազդեցություն [8]: Դեպրեսիան մի կողմից հանդես է գալիս իբրև սեռական խանգարումները պայմանավորող, իսկ մյուս կողմից և, բավական հաճախ, դրանց հետևանքը հանդիսացող և սեռական խնդիրը խորացնող հոգեկան խնդիր [10]: Ամենից հաճախ դեպրեսիվ տրամադրության հետ հանդես է գալիս կանանց սեռական ցանկության կորստի խնդիրը կամ ինչպես ընդունված է ասել՝ սեռական ցանկության (հետաքրքրության) դիսֆունկ-

ցիան: Schreiner-Engel & Schiavi հետազոտել են սեռական ցանկության իջեցումով դիմած մի խումբ տղամարդկանց և կանանց: Թեև հետազոտման պահին նրանք դեպրեսիա չեն ունեցել, այնուհանդերձ անամնեզում զգալիորեն բարձր է եղել տարած դեպրեսիայի ցուցանիշը [29]: Սովորաբար, դեպրեսիվ էպիզոդի սկիզբը համընկնում կամ անմիջապես նախորդում է սեռական ցանկության իջեցմանը:

Frohlich & Meston իգական սեռի ուսանողների շրջանում իրականացրած հետազոտության ժամանակ՝ օգտվելով Beck Depression Inventory (BDI) հարցարանից, առանձնացրել են 20 և ավելի միավոր ունեցողներին, համեմատության մեջ դնելով հսկիչ խնմբի հետ, ովքեր ունեցել են BDI –ի 3 և դրանից ցածր ցուցանիշ, ու եկել են այն բացահայտմանը, որ դեպրեսիա ունեցող կանայք նշում են սեռական գրգռման ավելի ցածր մակարդակ, օրգազմ ապրելու դժվարություն, հաճույքի և սեռական բավարարվածության բացակայություն [12]: Սակայն ի համեմատ հսկիչ խմբի այս կանայք նշում են ինքնաբավարմամբ զբաղվելու ավելի արտահայտված ցանկություն:

Նմանատիպ տվյալներ են հաղորդում նաև Cyranowsky et al., ովքեր հետազոտել են միջին տարիքի կանանց՝ մանիակալ-դեպրեսիվ խանգարման անամնեզով: Այդ կանանց մեջ դեպրեսիվ խանգարում ունեցողները նշում են ձեռնաշարժության ավելի բարձր ակտիվություն, ինչը փոխհատուցման միջոց համարել չի կարելի, քանի որ զույգի հետ հարաբերության ժամանակ հաճույքի ուժգնության տարբերություն չի գրանցվում [11]: Frohlich & Meston ենթադրում են, որ ձեռնաշարժությունը այդ կանանց տրամադրությունը կարգավորող ինքնահանգստացնող միջոց կարող է լինել [12]:

Mathew & Weinman դեպրեսիվ խանգարում ունեցող երկու սեռերի 57 ներկայացուցիչների մոտ հայտնաբերել են, որ 31% -ը կորցրել են իրենց սեռական հետաքրքրությունը, իսկ 22%-ը նշում են սեռական հետաքրքրության աճ [21]: Նմանատիպ հետազոտություն է արել նաև Angst-ը և բացահայտել, որ կանանց 8,8%-ն են նշում բարձր սեռական հետաքրքրություն, ի համեմատ 35,3%-ի, ովքեր ունեն իջած սեռական հետաքրքրություն (ի տարբերություն ոչ-դեպրեսիվ խմբի մոտ, համապատասխանաբար 1,7% և 31,6% ցուցանիշների) [3]:

Մյուս հետազոտողները չեն գտել որևէ կապի առկայություն բացասական տրամադրության և՝ թե՛ գենիտալ, թե՛ սուբյեկտիվ սեռական գրգռման միջև [25, 28]:

Սեռական գրգռման և ցանկության վրա հույզերի և տրամադրությունների ազդեցության մասին գիտական շատ ավելի մեծ թվով փաստեր կան փորձարարական պայմաններում կատարված հետազոտություններից, սակայն հիմնականում դրանք վերաբերում են տագնա-

պահարույց հոգեվիճակների ազդեցությանը: Փորձարարական պայմաններում հարուցված դեպրեսիվ ռեակցիայի և սեռական դրսևորումների փոխհարաբության ուսումնասիրումը շատ ավելի սահմանափակ է, այն էլ դրանցում ստացված արդյունքները դարձյալ միանշանակ չեն: Այս հետազոտություններում օգտագործվել է տրամադրության արհեստական ստեղծման մեթոդը՝ երաժշտության լսումով կամ ֆիլմի դիտումով:

Այսպես օրինակ, Wolchick et al. բացահայտել են, որ դեպրեսիվ տրամադրություն առաջացնող ֆիլմի նախնական ցուցադրությունը թուլացնում և իջեցնում է ավելի ուշ ցուցադրվող էրոտիկ ֆիլմին տված սեքսուալ ռեակցիաները, սակայն այս հետազոտությունը կատարված է տղամարդկանց հետ [31]: Նմանատիպ հետազոտություն կատարել են նաև Meisler& Carey, հատուկ մեթոդի օգնությամբ (Welten Mood Induction Procedure) ստեղծելով դրական և բացասական տրամադրություններ, նրանք գնահատել են տղամարդկանց էրեկցիան և սուբյեկտիվ գրգռման ռեակցիան և եկել այն եզրահանգմանը, որ բացասական տրամադրությունն ուշացնում և դժվարացնում է միայն սուբյեկտիվ գրգռման ռեակցիան, մինչդեռ գենիտալ գրգռումը մնում է անփոփոխ [23]: Նմանատիպ արդյունքերի է հանգել նաև մեկ այլ հետազոտող, նշելով, որ դրական տրամադրությունը խթանում է էրեկցիան և սուբյեկտիվ գրգռումը ի տարբերություն հսկիչ խմբի, ովքեր ունեն չեզոք տրամադրություն, միչդեռ բացասական տրամադրությունը իջեցնում է սուբյեկտիվ գրգռումը, անձեռնմխելի թողնելով գենիտալ ռեակցիան [24]:

Կանանց հետ փորձարարական պայմաններում տրամադրության ստեղծումով սեքսուալության ուսումնասիրում կատարել են Kuffel & Heiman, որտեղ գենիտալ գրգռման ռեակցիան որոշվել է հեշտոցային արյան ամպլիտուդի չափումով, իսկ տրամադրությունը հարուցվել է դրական կամ բացասական իմաստ կրող պնդումների հնչեցմամբ: Ի սկզբանե նրանք կանանց բաժանել են երկու խմբի, ըստ BDI-հարցարանով որոշված դեպրեսիայի մակարդակի չափի, մի խմբում ընդգրկվել են 9 և դրանից քիչ ցուցանիշով կանայք, մյուսում՝ չափավոր կամ միջին մակարդակի դեպրեսիա ունեցողները: Դրական պնդումը ասոցացվել է բարձր սուբյեկտիվ գրգռման, իսկ բացասականը՝ ընկճված սուբյեկտիվ գրգռման հետ, իսկ հեշտոցային ռեակցիան դրսևորվել է քիչ տարօրինակ ձևով, այն ավելի արտահայտված է եղել այն դեպքերում, երբ էրոտիկ ֆիլմի դիտմանը նախորդել է բացասական պնդման հնչեցումը, իսկ դրական պնդման դեպքում հաջորդող ֆիլմի դիտումը նույն ձևով է ազդել գենիտալ գրգռման վրա: Ընդհանուր առմամբ կանանց մոտ չի գրանցվել դրական համահարաբերակցություն

գենիտալ գրգռման և սուբյեկտիվ գրգռման միջև, ինչպես նաև կանանց երկու խմբերում չի դիտվել վիճակագրորոն հավաստի կապ վերոնշյալ բոլոր էֆեկտների համար [18]:

Bancroft et al. կողմից մշակվել է հատուկ հարցարան՝ Mood and Sexuality Questionnaire –տրամադրության և սեքսուալության հարցարան, որով գնահատվում է այդ երկուսի կապը [4]: Չորս հարցից բաղկացած այդ հարցարանը ուսումնասիրում է տագնապի/լարվածության և դեպրեսիայի/տխրության ազդեցությունը սեռական ցանկության ուժգնության և սեռական արձագանքման ռեակցիայի վրա: Ի տարբերություն գրականության մեջ առկա մյուս բոլոր հետազոտությունների այս հեղինակները փորձ են արել ուսումնասիրել տրամադրության և սեռականության կապը ոչ թե արհեստական ձևով հարուցված տրամադրություններով, այլ կյանքի բերումով ի հայտ եկած տրամադրությունների ժամանակ: Հետազոտությունը իրականացրել են թե կանանց, թե տղամարդկանց շրջանում: Կանանց դեպքում ամենաբարձր դրական կապ գրանցվել է տագնապային տրամադրության և սեռական արձագանքման ռեակցիայի միջև [20]: Փորձելով բացատրել տրամադրության և սեռական ակտիվության կապը այս հետազոտողները հիմնվում են հենց իրենց կողմից մշակված սեռական ակտի Dual Control մոդելին. դեպրեսիվ տրամադրությունը ենթադրում է՝ գրգռման պրոցեսների թուլացում և արգելակման բարձրացում: Հեղինակները ենթադրում են, որ բոլոր այն դեպքերում, երբ առկա է օրգանիզմի անհատական հակվածություն դեպի արգելակման պրոցեսների թուլությունը, դիտվում է նեգատիվ աֆեկտի պարադոքսալ ազդեցություն՝ սեռական ցանկության բարձրացմամբ: Ընդ որում այս պարադոքսալ ազդեցությունը նկատվել է ավելի երիտասարդ հասակում գտնվող ընտրանքի պարագայում [4]:

Մյուս բացատրությունը, որով փորձ է արվում հասկանալ բացասական տրամադրության ազդեցության փոփոխականությունը, կոգնիտիվ գործառույթի դերակատարման շեշտադրումն է և հատկապես նշվում է, որ սեռական ոլորտին վերաբերող բացասական կոգնիցիաների դերը վեգետատիվ լարվածության ֆոնի վրա սրում է այդ լարվածության ախտաբանական ազդեցությունը, քանի որ ուշադրության կենտրոնացումը սեռական գրգիռներից տեղափոխվում է այդ բացական կոգնիցիաների վրա և խախտում սեռական գրգռման ֆիզիոլոգիան [30]: Այսպիսով կարևորություն է տրվում ուշադրությանը, հատկապես այն, թե ինչի վրա է կենտրոնանում ուշադրությունը՝ որ տեսակի կոգնիցիաների՝ գրգռմանը նպաստող, թե խանգարող: Կան հետազոտություններ, որոնք ցույց են տալիս եսի գիտակցման դերը կանանց սեռական գրգռման և սեռական վարքի կազմակերպման

գործընթացում և հատկապես նշում են, որ ինքագիտակցումը այն նախապայմանն է, որով հնարավոր է դառնում սեռական գրգռման առաջացումը և կառավարելիությունը կամային որակներով [22]:

Վերջերս կատարված մի հետազոտության ժամանակ, որտեղ կիրառվել է հարցարանների օգնությամբ տրամադրության և սեքսուալության տարբեր դրսևորումների միջև կապերի ուսումնասիրում, հետազոտվել են տարբեր սեռային կողմնորոշում ունեցող տղամարդիկ և հետերոսեքսուալ կանայք: Պարզվել է, որ հոմոսեքսուալ տղամարդիկ և հետերոսեքսուալ կանայք դեպրեսիվ տրամադրության ժամանակ ավելի քիչ են ունենում սեսական գրգռման և ցանկության աճ, քան հետերոսեքսուալ տղամարդիկ, ինչպես նաև դրական համահարաբերակցություն է գրանցվել դրական տրամադրության և սեքսուալ ցանկության բարձրացման միջև միևնույն խմբերի համար [16]:

Ընդհանրացնելով գրականության վերոշարադրյալ վերլուծությունը՝ կարելի է ասել, որ դեպրեսիվ տրամադրությունը տարբեր կերպ է անդրադառնում կանանց սեքսուալ ֆունկցիայի վրա: Գիտական հետազոտություններում տարբեր գործոններ են ուսումնասիրվել՝ բացատրելու համար նեգատիվ աֆեկտի փոփոխական ազդեցության պատճառները: Կատարված կլինիկական հետազոտություններում, հիմնականում ուսումնասիրվել է դեպրեսիվ տրամադրության ազդեցությունը կանանց սեքսուալ դրսևորումների և վարքի վրա: Երբևէ ուշադրության չի արժանացել, թե ինչպիսի դեր է խաղում կանանց էրոտիկ լիբիդոյի վաղ տարիքային արթնացումը նեգատիվ աֆեկտի նկատմամբ սեքսուալության դրսևորած հակազդեցության վրա: Էրոտիկ լիբիդոյի արթնացման տարիքի կարևորությունը և կլինիկական գնահատման անհրաժեշտությունը նրանում է, որ իր բնույթով՝ սեռական այս դրսևորումը միաժամանակ իր մեջ ներառում է թե մարմնական, թե հոգեսոցիալ գործոններ: Այսինքն, այստեղ մենք գործ ունենք տարիքային այն կիզակետի հետ, երբ հիմնադրվում է սեքսուալության ձևավորման հենքը՝ իր սոմատիկ, աֆեկտիվ և վարքային ենթակառույցներով: Ուստի տարիքային այս կիզակետը, լինելով սեքսուալության զարգացման կրիտիկական շրջան, գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Поступила 25.05.15

Женские сексуальные проявления при депрессивном настроении

Н.Р. Нерсисян

В данной статье подробным образом изложен обзор научной литературы по вопросу влияния депрессии на женские сексуальные проявления. Исследованные статьи можно разделить на три группы, исходя из того, каким образом поставлен вышеуказанный вопрос:

а) клинические исследования женских сексуальных проявлений при различных сексуальных расстройствах с сопутствующей депрессией;

б) экспериментальные исследования воздействия искусственно провоцируемой депрессии на женские сексуальные проявления;

в) исследования взаимосвязи женских сексуальных проявлений и пониженного настроения, фокусируя при этом внимание на индивидуальные различия сексуальных реакций.

Указана парадоксальная связь между депрессией и увеличением уровня сексуального влечения и интенсивности сексуального возбуждения. Представлены некоторые вероятные механизмы данной парадоксальной связи.

Female sexual manifestations in depressive mood

N. R. Nersisyan

This article represents a review of literature concerning the problem of negative mood impact on female sexuality. The referred works could be distributed into three groups according to how the problem is considered: a) the association between clinical mood disorders and female sexual function, b) the impact of experimentally induced negative mood on sexual response and sexual manifestations, c) non-clinical negative mood relation to female sexual manifestations, with special emphasis on individual differences. A paradoxal relationship between negative mood and female sexuality is stated, and some explanations for this paradoxal pattern are suggested.

Գրականություն

1. *Васильченко Г.С.* Общая сексопатология. М., 2003.
2. *Кришталь В.В., Григорян С.Р.* Сексология. Учебное пособие. М., 2002.
3. *Angst J.* Sexual problems in healthy and depressed persons. International Clinical Psychopharmacology, 1998, 13 (suppl 6): S1-S4.

4. *Bancroft J., Janssen E., Strong D. et al*. The Relation Between Mood and Sexuality in Heterosexual Men. Archives of Sexual Behavior, 2003, Vol. 32, 3 June 2003, p. 217–230.
5. *Barlow D. H., Sakheim D. K. & Beck J. G.* Anxiety increases sexual arousal. Journal of Abnormal Psychology, 1983, 92, p. 49–54.
6. *Barlow D.H.* The causes of sexual dysfunction: the role of anxiety and cognitive interference. Journal of consulting and clinical psychology, 1986, 54:140-148.
7. *Basson R*. Biopsychosocial models of women's sexual response: Applications to management of "desire disorders". Sexual Relationship Ther., 2003, 18:107–15.
8. *Beck A.T.* Depression. Clinical, Experimental and Theoretical Aspects. Stapless Press, London, 1967, 37, p. 1311–1316.
9. *Bradford A., Meston C.M*. The impact of anxiety on sexual arousal in women. Behaviour Research and Therapy, 2006, 44:1067–1077.
10. *Cassidy W. I., Flanagan N.B., Spellman M. et al*. Clinical observations in manic depressive disease. Journal of the American Medical Association, 1957, 164: 1535-1546.
11. *Cyranowski J.M., Bromberger J., Youk A. et al*. Lifetime depression history and sexual function in women at midlife. Archives of Sexual Behavior, 2004, 33: 539-548.
12. *Frohlich P., Meston C*. Sexual functioning and self-reported depressive symptoms among college women. Journal of Sex Research, 2002, 39: 321-3254.
13. *Hale V.E., Strassberg D.S.* The role of anxiety in sexual arousal. Archives of Sexual Behavior, 1990, 19: 569-581.
14. *Hoon P., Wincze J. P., & Hoon E.* A test of reciprocal inhibition: Are anxiety and sexual arousal in women mutually inhibitory? Journal of Abnormal Psychology,1977, 86, p. 65–74.
15. *Janssen E., Everaerd W. et al.* Automatic Processes and the appraisal of sexual stimuli:toward an information Processing model of sexual arousal. The Journal of Sex Research, 2000, vol. 37, 1, p. 8-232.
16. *Janssen E., Kathryn R. et al.* Individual Differences in the Effects of Mood on Sexuality: The Revised Mood and Sexuality Questionnaire (MSQ-R) J. Sex Res., 2013, 50(7): 676–687.
17. *Koukounas E., & McCabe M. P.* Sexual and emotional variables influencing sexual response to erotica: A psychophysiological investigation. Archives of Sexual Behavior, 2001, 30, p.393–408.
18. *Kuffel S.W., Heiman J.R.* Effect of depressive symptoms and experimentally adopted schemes on sexual arousal and affect in sexually healthy women. Archives of Sexual Behavior, 2006, 35: 163-178.
19. *Laan E., & Everaerd W*. Determinants of female sexual arousal: Psychophysiological theory and data. Annual Review of Sex Research, 1995, 6, p. 32-763.
20. *Lykins A., Janssen E., Graham C*. The relationship between negative mood and sexuality in heterosexual college women and men. Journal of Sex Research, 2003, 2006;43:136–143.
21. *Mathew R.J., Weinman M.L.* Sexual dysfunction in depression. Archives of Sexual Behavior, 1982, 11: 323-328.
22. *Meston C. M*. The effects of state and trait self-focused attention on sexual arousal in sexually functional and dysfunctional women. Behavior Research and Therapy, 2006, 44:515-532.
23. *Meisler A.W., CArey M.P*. Depressed affect and male sexual arousal. Archives of Sexual Behavior, 1991, 20: 541-554.
24. *Mitchell W.B., Marten P.A., Williams D.M. et al.* Effects of positive and negative mood on sexual arousal in sexually functional males. Archives of Sexual Behavior, 1998, 27:197-207.
25. *Nobre P.J., Wiegel M., Bach A.K., Weisberg R.B. et al*. Determinants of sexual arousal and accuracy of its self-estimation in sexually functional males. J. Sex. Res., 2004, 41(4):363-71.
26. *Palace E. M., & Gorzalka B. B.* The enhancing effects of anxiety on arousal in sexually functional and dysfunctional women. Journal of Abnormal Psychology, 1990, 99, p. 403–411.

27. *Rosen R. C. & Beck J. G*. Patterns of sexual arousal. New York: The Guilford Press, 1988.
28. *Rowland D.L., Cooper S.E., Slob A.K*. Genital and psychoaffective response to erotic stimulation in sexually functional and dysfunctional men. J. Abnorm. Psychol., 1996, 105(2):194-203.
29. *Schreiner-Engel P., Schiavi R.C., Vietorisz D. et al*. Lifetime psychopathology in individuals with low sexual desire. Journal of Nervous and Mental Diseases, 1986, 174: 646-651.
30. *Wiegel M., Scepkowski L.A., Barlow D.H*. Cognitive-affective processes in sexual arousal and sexual dysfunction. In: Janssen E. Sexual Psychophysiology. Indiana University Press, Bloomington, 2007, p. 143-165.
31. *Wolchick S.A., Beggs V.E., Wincze J.P. et al.* The effect of emotional arousal on subsequent sexual arousal in men. Journal of Abnormal Psychology, 1980, 89: 595-598.